Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 360 - Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ
# «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է հիմնանորոգել «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2-րդ մասնաշենքի տանիքը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման համար: |
| 2. | Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, քաղաք Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Քազազնունու փողոց, 12 շենք<br>Բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 31,598,401 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ՀՎՀՀ 02661245 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2023 թվականի մայիսի 29-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների նկարագրություն. |

| | | |
|---|---|---|
| | | • Տանիքի ծածկույթի, ջրհորդանների, կավարամածի, մեկուսիչ շերտի քանդում<br>• Երկաթբետոնից գոտու իրականացում, նոր ծպեղների տեղադրում<br>• Լանջավոր տանիքի պատրաստում ցինկապատ գունավոր մետաղակղմինդրից, կավարամածի պատրաստում<br>• Ջրհորդանների և անձրևաճոռների պատրաստում, ջրհոս խողովակների տեղադրում<br>• Ցեմենտի հարթեցնող շերտի իրականացում<br>• Մետաղական աստիճանների պատրաստում<br>• Հրապաշտպանական միջոցառումների իրականացում<br>• Պարապետի սվաղում և ներկում<br><br>Բյուջե՝ 31,598,401 դրամ<br>Ժամկետ՝ 2023 թվականի մայիսի 29-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 31-ը |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2-րդ մասնաշենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում - 31,598,401 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը | Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում Հայ օգնության Ֆոնդը համագործակցելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության Ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ